

Գ Ի Տ ՈՒ Թ Ե Ս Ն Ա Շ Խ Ա Ր Հ Ի Ց

ԹՈՒՔԱԽՏ ԵՒ ԱԼԿՈՒԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ալկոլականութեան յառաջադրած վտանգների մէջ ամենամեծ տեղը թոքախտին պէտք է տալ, մի ախտ, որը սոսկալի կոտորածներ է անում մարդկային շարքերի մէջ:

Թոքախտի՝ մարդկութեան պատճառած սարսափելի զոհերի մասին մի փոքր դադափար կազմելու համար, պէտք է յիշել, որ երկրագնդի վրայ պատահած բոլոր մահերի 5 ից 1-ը թոքախտին է պատկանում, և մարդկանց գրեթէ կէսը թոքախտաւորներ են. որովհետև Եւրոպայում զանազան պատճառներով մեռնողների վրայ կատարւած դիագնոստիկաները ցոյց են տալիս, որ նրանց 100-ին 60-ը ենթակայ են եղած թոքախտի:

Այս մասին մի ուրիշ վաստա թոքախտի մեկրօքը գտնող պրօֆ. Կօխ, դուրէ շատերը յիշում են, գտնել կարծեց նաև նրա բուժող շիճուկը (տիւրէրկիւլին). դիտնականները բազմաթիւ հիմնական և լուրջ փորձերով ջրեցին այդ շիճուկի բուժական յատկութիւն ունենալը, սակայն այս փորձերը մի ուրիշ բան առաջուցին, այսինքն, այդ շիճուկը թոքախտի փորձաքարը լինելու յատկութիւնն ունի. նրա ներարկումով կարելի է իմանալ, թէ փորձի ենթարկուող անասունը կամ մարդը թոքախտաւոր է թէ ոչ: Այժմ քաղաքակիրթ երկրներում, այս միջոցը գործադրւում է, մարդկային սնունդին յատկացրուած կենդանիներին ջուկելու և նրանց առողջ կամ թոքախտաւոր լինելը որոշելու համար:

Անո՛ս այս միևնոյն փորձերը մարդկանց վրայ ևս կատարելով, թոքախտի ըստ երևոյթին քաջառողջ և ուժեղ թուող անհատների վրայ յաճախակի դոյութիւնը ցոյց են տուած:

Կօխի այս դիւտից յետոյ դիւնուորական ուժեղ կազմակերպութիւն ունեցող մի տէրութեան վեհապետը յանկարգաւ իր

զինուորների շարքերից բոլոր թղթախտաւորներին հեռացնելու համար Կօխի շիճուկը գործադրել, սակայն այս փորձերի ենթարկուող զինուորների մէջ թղթախտաւորների թիւը այնքան անհամեմատ մեծ եղաւ, որ այս քաջընտիր բանակում խիստ ահագին մի դատարկութիւն թողնելու վախից ստիպուած, հարկ համարուեց փորձերը դադարեցնել:

Այս կարճ տողերով ուզեցինք ցոյց տալ՝ թէ թղթախտը ինչքան մեծ զոհեր է պատճառում մարդկութեան և թէ սրբանահ ու սարսափ ազդող մի հիւանդութիւն է:

Այժմ ցոյց կը տանք այս վտանգաւոր հիւանդութեան ծնունդ տուող պատճառների մէջ ամենամեծ տեղը բռնող ալկոլականութիւնը և նրա կատարած դերը թղթախտի մէջ:

Եթէ ապագայ Մօստէպիէօններ դանկանան մի ցեղի անկման պատճառները ցոյց տալ, կը պարտաւորուեն մի մեծ գլուխ յատկացնել ալկոլականութեան...

Ալկոլի վնասակար ազդեցութիւնը ներգործում է նաև սերունդների վրայ: Այն երկրներում, որտեղ խմիչքներ աւելի շատ գործ են ածուում, երեխաների մէջ աւելի շատ մահ է պատահում, ալկոլամոլ ընտանիքների ծոցում երեխաները աւելի շատ են մեռնում թղթախտով:

Գրեթէ բոլոր թղթախտաւորները ալկոլամոլներ են. միայն թէ նրանց արամադրութիւնը միշտ համեմատական չէ նրան գործածած խմիչքների քանակութեան հետ: Մարդիկ կան, որոնք ուրիշների հետ համեմատած, տանել կարողանում են, մեծ չափով խմում են, առանց մի շոշափելի վնասի: Մի ալկոլամոլ միշտ կարող է իրանից աւելի ալկոլամոլ մէկին ցոյց տալ, որը իրանից աւելի քաջառողջ է: Այս տարբերութեան պատճառը անհատական հանդուրժողութեան մէջ է, որպէս նոյն բանը պատահում է բոլոր թոյների համար:

Անվիճելի կերպով հաստատուած մի իրողութիւն է, որ ալկոլամոլները աւելի հեշտութեամբ թղթախտաւորներ են դառնում, նրանց համար թղթախտը աւելի վտանգաւոր է և աւելի շուտ զարգանում:

Ֆրանսական բժշկական ակադէմիայի անդամ պրօֆ. Լանսէրօ կանխարգել միջոցների մասին խօսելիս, շեշտած է նաև ալկոլականութեան դէմ կռուելու անհրաժեշտութիւնը: Իրողութիւնների բնական ընթացքով հակաթղթախտականները հետզհետէ հակալկոլականներ են լինում. ալկոլի դէմ մղուած կռիւը, նշանակում է միևնոյն ժամանակ թղթախտի դէմ կռիւ մղել, վերջապէս թղթախտը և ալկոլականութիւնը երկու անբաժանելի ընկերներ են:

Պրոֆէսոր Լանսէրօ ասում է. «Թորքախտի կանխարգել միջոցը ոչ թէ միայն միկրօքի մարդկանց հետ շփումը արգելելու մէջ է կայանում, այլ մանաւանդ օրգանիզմը տկարացնող պարագաները արգելելու ընդունակ միջոցների մէջ»:

Յիշեալ պրոֆէսորի կողմից 40 տարուայ շրջանում ծանօթագրուած 2,192 թղթախառար հիւանդների վրայ թղթախտի տրամադրող պատճառների մէջ յիշուած են հետևեալները.

- 1,229 դէպք ալիոլամոլութիւն:
- 824 « անբաւական օդ, թշուառութիւն, յղութիւն:
- 98 « հաւանական ժառանգականութիւն.
- 46 « ուրիշից վարակում:

Ուրեմն թղթախտաւորների կէսից աւելին ալիոլամոլներն են կազմում: Այս 1,229 ալիոլամոլ թղթախտաւորների քննութիւնից հետոնում է. 1.—Ալիոլամոլների թղթախտը 25 և 50 տարիքում աւելի շատ է պատահում: 2.—Ընդհանրապէս թղթախտը ուժեղ անհատներին է հարուածում, որոնք սակայն ալիոլականութեամբ տկարացել են: 3.—Ալիոլամոլների թղթախտը աւելի սուր կերպարանք է ստանում և աւելի շուտ գերեզման առաջնորդում:

Այս 1,229 ալիոլամոլ թղթախտաւորները գործածած են են եղել խմիչքների հետևեալ տեսակները.

- 388 հոգի, խառն խմիչքներ (արաղ, գինի, արսէնթ կայլն):
- 254 » արաղ, արսէնթ, լիքէօր:
- 289 » արսէնթ, լիքէօր:
- 164 » գինի:
- 98 » գինի և արաղ:
- 91 » արաղ:

Այս ցուցակից պարզ երևում է, որ խմիչքների մէջ աւելի մեծ վնաս են պատճառում խառն խմուածները. իսկ գինին, որ շատերի կողմից մի անմեղ խմիչք է նկատուած, արաղից աւելի վնաս է տալիս:

Ալիոլամոլների թուին հետ եթէ թղթախտի յաճախութիւնը համեմատելու լինենք, կը տեսնենք որ 1,984 ալիոլամոլներից 853-ը թղթախտաւորներ են: Ուրեմն համարձակ կարող ենք ասել, որ ալիոլակալուութեան ամենամեծ վսանգը քոֆախսն է:

Պրոֆ. Լանսէրօ եզրակացնում է. «Թղթախտին նպաստող առաջին մեծ պատճառը ալիոլականութիւնն է: Ուրեմն անհրաժեշտ է այս սկզբնական պատճառի վրայ ուշք դարձնել: Միկրօքի դէմ կռիւ մղելը, ջնջել ջանալը, մի իւտօպի է, որովհետև այս միկրօքը ամեն տեղ գոյութիւն ունի: Ընդհակառակը,

աւելի հեշտ է այս աղէտի դէմ կուռել և մրցել, արգելելով այն պատճառները, որոնք օրգանիզմը քայքայում են և հիւանդութեան ընդունակ մի վիճակի ենթարկում:

«Հարուածել արկղականութիւնը, նշանակում է, թոքախտաւորների կէսից աւելին պահասեցնել:

«Ճրանսխայում և Անգլիայում թոքախտով պատահած մահերի թուեքը եթէ համեմատելու լինենք, կը հաստատենք որ Անգլիան՝ իր խոնաւ, միզամած և ցուրտ կլիմայով տարեկան հազըւ 50,000 թոքախտաւորներ է կորցնում, մինչդեռ Յրանսիան՝ աւելի առողջաւէտ մի կլիմայով, ամեն տարի թոքախտով 150,000 մահ է տալիս, Անգլիայի հետ համահաւասար բնակչութեան վրայ:

«Այս ահագին տարբերութիւնը՝ միայն թոքախտի պատճառով 100,000 աւելի մահը ինչ բանի վերագրելու է:

«Անգլիա ճանապարհորդած միջոցիս բանուորների մի քանի դասակարգերի մէջ անգլիացու ամեն մի ճաշի ժամանակ ընդունուած սնունդի չափը և սննդարար արժէքը տեսնելով զարմացայ: Նրանց սննդատութեան հաշուէկշիռը հաստատել ցանկանալով, կարողացայ քննել միջակ կազմով 10 անգլիացի հայելագործ բանուորների մէջ: Միևնոյն քննութիւնը կատարեցի նաև 10 ֆրանսիացի հայելագործ բանուորների վրայ: Քննութիւններիս վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ անգլիացիների մէջի միջոցով արսւաքսուած տարրերի քանակութիւնը շատ աւելի մեծ է:

«Ուրեմն անգլիացի բանուորը աւելի լու սնունդ է առնում, ֆրանսիային անբաւական և վատ սնունդ ունի, նա ակտիւց է սպասում ւրուեստական ոյժ: Վարժքերը գրեթէ նոյն են, բայց Անգլիայում ասրուստը անբաղդատելի կերպով նուազ թանգ է, որովհետև, գոնձային օրէնքը գոյութեան համար սմինաանհրամկշտ կզող նիւթերի վրայ մաքս դնելուց զգուշացած է, մինչդեռ Յրանսիայում ընդհակառակն է»:

Բոլոր ազգերի մէջ Յրանսիան առաջին տեղն է բռնում թոքախտի, արկղականութեան և մարդանուազութեան կողմից:

Այս տարի Լօնդօնում գումարուած քոֆալսի դեմ կօնգրեստում պրօֆ. Բրուարդէլ մի ընդհանուր տեղեկագիր է ներկայացրած, որից քաղում են հետևեալը.

Չանազան երկրներում թոքախտով մեռնողների մահաթիւր եթէ քննուի, նախ և առաջ կը տեսնուի որ 1880 թուականից սկսած եւրոպական բոլոր երկրներում, բացի Ունգարիայից, Յրանսիայից և Իտալիայից, թոքախտով մեռնողների թիւը պահասած է: Միայն մեծ քաղաքների ազգաբնակչութիւնը աչքի

առաջ ունենալով կ'առևնք, որ Անգլիայում թղթախտով մեռնողների թիւը մի միլիոն ընտելչի վրայ 440-ով պակասած է, Գերմանիայում 1,015-ով, մինչդեռ Ֆրանսիան 680 յաւելում ցոյց է տալիս, Ունգարիան 297 և Իտալիան 145:

Գաւառներում թղթախտով մեռնողների մահաթիւրը ալիոլի սպառման հետ համեմատելով, պ. դը Լավարէն ցոյց է տալիս, որ աւելի շատ ալիոլանայած ազգերը նրանք են, որոնք աւելի լայն ծաւալով զոհեր են տալիս թղթախտին:

Մի երկրում ալիոլի սպառումը որքան շատանում է, նոյն համեմատութեամբ էլ թղթախտով մեռնողների թիւը աւելանում է, այս մասին պ. Բոդրանի կազմած վիճակագրութիւնը մէջ բերելով կը հաստատենք մեր ասածը:

Այս ցուցակում թղթախտով մեռնողների թիւը նշանակուած է 10,000 ընտելչի վրայ, իսկ գործածուած ալիոլի քանակութիւնը մարդագլուխ տարեկան միջին չափով.

12, 47 լիտր ալիոլ . . .	30-ից 40 մահ
14, 72 » » . . .	40-ից 50 »
15, 21 » » . . .	50-ից 60 »
16, 82 » » . . .	60-ից 70 »
17, 16 » » . . .	70-ից 80 »
17, 80 » » . . .	80-ից 90 »
30, 70 » » . . .	90-ից աւելի

Ուրեմն երբոր մի տեղ մարդագլուխ տարեկան 12,47 լիտր ալիոլ է սպառում 10,000 ընտելչի վրայ, թղթախտով մեռնողների թիւը լինում է 30-ից 40, իսկ երբոր ալիոլի քանակութիւնը 30,70 լիտրի է բարձրանում, նոյն համեմատութեամբ էլ մեռնողների թիւը 90-ից աւելի է բարձրանում:

Թղթախտի համար դումարուած յանձնաժողովը հետևեալ եզրակացութիւնները ընդունած է.

«Ալիոլականութիւնը ծնունդ է առնում այն նախապաշարումից, որ ալիոլին վերագրուած է զանազան ողջպահիկ և ուժատու յատկութիւններ: Կլինիքը ընդհակառակը ոգելից լամիչքների արտածին դերն է ցոյց տալիս:

«Հիմնուելով այս անհերքելի իրողութեան վրայ, հասարակաց պաշտօնեաները կը կարողանային ուղղութիւն տալ բոլոր իրանց պաշտօնավարութեանց մէջ (դպրոց, ճեմարան, ազմինիստորացիա, ցամաքային և ծովային բանակ, և այլն). հակալիոլական պրօպականդա անելով, նախնական, երկրորդական, բարձրագոյն և մասնագիտական կրթական ծրագիրների համեմատ, որոնք լայն կերպով ընդհանրանալով, իբրև տիպարներ կը ծա-

ուայէին գործարաններէ, աշխատանոցներէ, արհեստանոցներէ, և այլնի պետերին»:

Պրօֆ. Դէբօլ Beaujon-ի (Պարիզում) հիւանդանոցի կլինիքում բոֆալսի կանխարգել միջոցներէ վրայ դասախօսելիս, իր աշակերտներին ասում է. «Այն կանոնը, որ ևս ցանկանում եմ նախապէս ձեզ ներշնչել և ուրիշներին խրատել, այն է բնաւ չը գործածել ոգելից խմիչէներ»:

«Ձեր առաջ չը պիտի դադարիմ հարուածելուց այն տարօրինակ վճիռը՝ թէ ալկոլը ոյժ է տալիս. ալկոլը միմիայն վնասակար ազդեցութիւններ է ունեցած»:

«Ճիշդ է, որ զանազան պարագաներում, երբ որ խնդիրը մի վաղանցիկ դրդութիւն յառաջ բերելու վրայ է, ինչպէս այն հիւանդին, որի վրայ մի ծանր վիրաբուժական գործողութիւն է կատարուած, ալկոլ տալիս ենք, Բայց երբոր իմանում ենք թէ մին նիւթ դարմանող յատկութիւններ ունի, դրամից չէ հետևում թէ նա միշտ օգտակար է լինելու և թէ նրա սովորական գործածութիւնից որեւէ անպատեհութիւն յառաջ չէ գալու»:

«Ինչ որ է, մեր նիւթին դառնալով, ասում է պրօֆէսորը, ալկոլը թորախտի առաջ գալուն անտարակոյս նպաստում է»:

Տրանսիայի փառքը կազմող պրօֆէսորներից Դէբօլի, Բրուարդէլի և Լանսէրոյի կարծիքները մէջ բերելով, ուղեցիկք հաստատել, որ ալկոլականութիւնը պատճառ է դառնում թորախտի, այս սարսափելի հիւանդութեան, Ալկոլականութեան այս արչաւանքը պէտք է բոլորի աչքին երևի իբրև հասարակական մի մեծ վտանգ և անհրաժեշտ է փորձել և մասսայի մտքի մէջ դրոշմել սա ճշմարտութիւնը՝ թէ այս աշխարհի մէջ միայն ժուժկալ ժողովուրդները ապագայ ունին...

Դօկտ. Կ. Յ. ՓԱՇԱՅԵԱՆ